Սա աշակերտ Մատթէոսի բաբունոյ
Եղեալ երբեմն և Պատրիարգ Բիւզանդիոյ,
Որ յիշանեն յանոպայիցն ի պատուոյ
Եւ իշուածոյ լուծման դիպեալ ըստ մարմնոյ
Ցամս բազում կիսամեռիկ խեղճ գոլով
Այլ ոչ զրան կենարարին բաց թողլով
Չի էր արի և անձանձիր ուսուցիչ
Ըստ Բարսղին տկար անձամբ ժիր հոգւով
Սորին սիրով տափահարեալ Մուրատեան
Եէկէն մահտեսի Յովհաննէսն հոգեկան
Որպէս զՅովսէփ արիմաթեան երկիւղած
Արդար ընչիւք չինեաց սորայն զտապան.
Որ երկոցունցն ի մի բերան թէ տացեն
Մի հայր մերիւ որք զողորմիան ասիցեն
Անճառ թուով զողորմութիւն գտանիցին
Չեռ հարիւրակ տասն և երկու թիւ մերժեսցին։

Տապանագրին վերջընթեր տողին առաջին բառը «Անճառ» Պատրիարքին մահուան թուականն է, այսինքն՝ 1 + 400 + 100 + 1 + 1000 = 1502, *ուրկէ պէտք է հանել* 312 *ինչպէս կը պատուիրէ վերջին տողը, որով կ՚ունենանք՝* 1502 — 312 = 1190 *Հայոց թուականը, որ կը համապատասխանէ՝ Քրիստոսի* (1190 + 551) = 1741 *թուին։*

Է.

ԳԷՈՐԳ ՊԱՏՐԻԱՐՔ ՂԱՓԱՆՑԻ

Սա ալ թաղուած է Պուրսայի Հայոց Եկեղեցիին բակը, ասոր տապանագիրն ալ Ներսէս Պալատցիի տապանագրին հետ հրատարակուած է վերոյիշեալ թերթերուն մէջ։ Ահաւասիկ այն.

Տապանս ազնիւ առն անոր ման
Հողապատեան յարկ անգե րան
Բերէ ի ցոյց յայտ յանդի ման
Զօրն վերջին հանուրց մարդ կան
Որպէս ցորեան հասեալ հնձ ման
Գայ ժողովի ի շտեմս րան
Սոյնպէս հանուրք բանակին տան
Ելմամբ հոգւոյն առնուն վախ ճան.
Իսկ որ եղեալս է յայս տա պան
Էր գերազնիւ գեր յարգա կան
Պետն Գէորգ սիրոյ մա ռան
Որ յոյժ բազմաց էր սիրա կան,
Ծնման տեղին Ղարանըս տան
Եղև քարոզ յոյժ քաղցրա բան